## ՄԵՐ ՀԱՍՑԵՆԵՐԸ

### Գլխամասային գրասենյակ

Հասցե` ք. Երևան 0018
Քաջազնունու 18
Հեռ.` (374 10) 55 08 31
(374 10) 55 07 41
Ֆաքս` (374 10) 55 07 84
Էլ. հասցե` fca@fca.am

### Մասնաճյուղեր

ք. **Մասիս**, Արարատյան փ. 3/2, հեռ.` **(0236) 4 00 99**
ք. **Էջմիածին**, Մաշտոցի 73, հեռ.` **(098) 08 95 90**
ք. **Եղեգնաձոր**, Նարեկացի 6/12, հեռ.` **(0281) 2 10 17**
ք. **Արմավիր**, Երևանյան փ. 21/5, հեռ.` **(0237) 2 90 01**
ք. **Աբովյան**, Հատիսի փ. 1/68, հեռ.` **(0222) 3 06 05**
ք. **Արտաշատ**, Օգոստոսի 23 փ. 3, հեռ.` **(0235) 2 09 01**
ք. **Սիսիան**, Սիսականի փ. 11, հեռ.` **(0283) 2 61 20**
ք. **Աշտարակ,** Ն. Աշտարակեցու 86, հեռ. **(374 94) 94 40 16**
գ. **Մյասնիկյան,** Երևանյան փ. 3/1, հեռ. **(374 77) 17 01 33**



www.fca.am

# Ֆարմ Կրեդիտ Արմենիա Վարկային Կոոպերատիվ

Համագործակցություն ի շահ բոլորի




# Խելամիտ վարկավորման ուղեցույց

MICROFINANCE CENTRE

Part of an international educational campaign carried out by the Microfinance Centre.

## ՈՐՔԱ՞Ն ՎԱՐԿ ԿԱՐՈՂ ԵՄ ՎԵՐՑՆԵԼ

- Սովորե՛ք հաշվել Ձեր ամսական խնայողությունները
- Վարկի ամսական վճարումները չպետք է գերազանցեն Ձեր ամսական խնայողությունների 70%-ը

  Օրինակ. եկամուտ = 1000, ծախսեր = 800, խնայողություն = 200: Այս դեպքում Ձեր ամսական վճարումները չպետք է գերազանցեն 140-ը
- Վարկ վերցրե՛ք այն արժույթով, որով Ձեր եկամուտն է:
- Ֆարմ Կրեդիտ Արմենիան կգնահատի Ձեր վճարունակությունը



## ԳԻՏԵ՞Մ ԱՐԴՅՈՔ ՈՐՔԱՆ ՊԵՏՔ Է ՎՃԱՐԵԼ

- Սովորե՛ք համեմատել տարբեր առաջարկները, համապատասխան ընտրություն կատարելու համար
- Համեմատե՛ք տարեկան և արդյունավետ տոկոսադրույքները
- Հիշե՛ք՝ ցածր տոկոսադրույքը չի երաշխավորում, որ վարկը էժան կլինի
- Ամսական վճարները հաշվարկելիս տոկոսավճարներից բացի ներառե՛ք նաև բոլոր միջնորդավճարները
- Զգուշացե՛ք չափազանց ակտիվ վարկատուներից. հատուկ առաջարկները հազվադեպ են հատուկ լինում
- Ուշադիր ուսումնասիրե՛ք վարկի ժամկետը, վճարման ավելի փոքր չափը երկար ժամկետով միշտ չէ, որ ավելի էժան է ստացվում
- Ֆարմ Կրեդիտ Արմենիան, ինչպես նաև Միկրոֆինանս սավորման կենտրոնի բոլոր անդամները տեղեկացնում են բոլոր վճարների մասին, ներառյալ տուգանքները




## ԱՐԴՅՈ՞Ք ԵՍ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԵՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- Կարդացե՛ք պայմանագիրը սկզբից մինչև վերջ: Հասկացե՛ք վճարները, տույժերը, ժամանակահատվածը և վճարելու մեխանիզմները
- Խնդրե՛ք Ձեր վարկային մասնագետին օգնել Ձեզ հասկանալ պայմանագրի յուրաքանչյուր կետը
- Մի՛ շտապեք ստորագրել մի փաստաթուղթ, որը չեք հասկանում




## Ի՞ՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԴԺԳՈՀ ԵՄ

- Օգտագործե՛ք Ձեր բողոքելու իրավունքը
- Դիմե՛ք մեզ գլխամասային գրասենյակ, (ք. Երևան, Քաջազնունու 18 հեռ. 010-55-08-31) կամ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ (ք. Երևան, Մ. Խորենացու 15 հեռ. 010-58-23-22)
- Ձեր կարծիքը կօգնի ավելի լավ ծառայություններ տրամադրել հաճախորդներին



## ԿԱՌԱՎԱՐԵ՛Ք ՁԵՐ ՊԱՐՏՔԸ. ԹՈՒՅԼ ՄԻ՛ ՏՎԵՔ, ՈՐ ԱՅՆ ԿԱՌԱՎԱՐԻ ՁԵԶ

- Չափից մեծ վարկը ստեղծում է խնդիրներ վճարման հետ կապված
- Խուսափեք զուգահեռ վարկեր վերցնելուց
- Վարկը պետք է վերցնել ներդրման համար: Խուսափեք վարկն օգտագործել ցանկալի, բայց ոչ անհրաժեշտ նպատակների համար
- Հոգացեք, որ Ձեր վարկային պատմությունը լինի դրական
- Վարկ մի վերցրեք մեկ ուրիշի համար
- Ուշադիր եղեք այլ անձանց վարկի համար երաշխավորություն տալուց
- Խորհրդակցեք Ձեր վարկային մասնագետի հետ, եթե խնդիր ունեք: Մենք միշտ պատրաստ ենք Ձեզ օգնել

